



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՇՈՒՄ

15 ապրիլի 2020 թ.

N 262-Ա

ք. Ստեփանակերտ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵՂՈՔԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 3-րդ, 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հաստատել կորոնավիրուսի տարածման հետևանքով՝

1) առաջացած դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած՝ անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքներին միանվագ ֆինանսական աջակցության տրամադրման միջոցառումը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) աշխատանքի շուկայում գոյացած դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած՝ մինչև 14 տարեկան երեխաներ ունեցող ընտանիքներին միանվագ նպաստների տրամադրման միջոցառումը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Կորոնավիրուսի տարածման հետևանքով առաջացած դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած չաշխատող միայնակ հղի կնոջը, ինչպես նաև չաշխատող այն հղի կնոջը, ում ամուսինը 2020 թվականի մարտի 1-ի դրությամբ չի ունեցել աշխատանք և 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ աշխատանքի չի ընդունվել, տրամադրել 100 000 ՀՀ դրամի չափով միանվագ ֆինանսական աջակցություն:

3. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն) տրամադրել հանրապետության բժշկական հաստատություններում հաշվառված հղի կանանց վերաբերյալ տեղեկությունները:

4. Արցախի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում նախարարությանը տրամադրել քաղաքացիական կացության ակտերի գրանցման համակարգում

գրանցված՝ սույն որոշմամբ նախատեսված շահառուների ամուսնությունների վերաբերյալ տեղեկությունները:

5. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում նախարարությանը տրամադրել սույն որոշմամբ նախատեսված՝ աշխատանքից ազատված շահառուների մասին տեղեկությունները:

6. Առաջարկել համայնքների ղեկավարներին կազմակերպել սույն որոշման 1-ին կետով նախատեսված շահառուների կողմից անհրաժեշտ փաստաթղթերը նախարարություն ներկայացնելու գործընթացը:

7. Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարներին՝ համակարգել սույն որոշման 6-րդ կետում նշված աշխատանքների կատարումը:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:



«Հաստատում եմ»

**ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ
ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ
ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՌՋԵՎ
ԿԱՆԳՆԱԾ՝ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Միջոցառման նպատակն է միանվագ ֆինանսական աջակցություն տրամադրել կորոնավիրուսի տարածման հետևանքով առաջացած դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած՝ անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքներին:

2. Միանվագ ֆինանսական աջակցություն տրամադրվում է յուրաքանչյուր երեխայի համար՝ 26 500 ՀՀ դրամի չափով:

3. Միջոցառման շահառու են հանդիսանում՝

1) մինչև երեք (ներառյալ) անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքները, եթե երեխայի ծնողները կամ ծնողներից մեկը կամ միակ ծնողը 2020 թվականի մարտի 1-ից մինչև մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ազատվել են (է) աշխատանքից կամ չեն ունեցել աշխատանք:

2) չորս և ավելի անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքները:

4. Սույն միջոցառման 3-րդ կետով նախատեսված շահառուներին միանվագ ֆինանսական աջակցություն տրամադրելիս տվյալ ամսվա՝ Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 17-ի N 273-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված պետական նպաստները չեն վճարվում՝ բացառությամբ սույն միջոցառման 5-րդ կետում նշված դեպքերի:

5. Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված զինծառայողների երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 17-ի N 273-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված պետական նպաստը վճարվում է՝ անկախ ընտանիքին միանվագ ֆինանսական աջակցություն տրամադրելու հանգամանքից:

6. Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 17-ի N 273-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված՝ մինչև երկու տարեկան երեխա խնամող անձանց տրամադրվող պետական նպաստները վճարվում են՝ անկախ ընտանիքին միանվագ ֆինանսական աջակցություն տրամադրելու հանգամանքից:

7. Սույն միջոցառմամբ նախատեսված միանվագ ֆինանսական աջակցության և սույն որոշման N 2 հավելվածով նախատեսված միանվագ նպաստի իրավունք ունենալու դեպքում երեխայի համար ընտանիքին տրամադրվում է միանվագ նպաստը:

8. Մինչև երեք (ներառյալ) անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքները սույն միջոցառմամբ նախատեսված միանվագ ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝ հետևյալ էլեկտրոնային հասցեներով՝ stepanakert-sag@mail.ru, martuni-sag@mail.ru, hadrut-sag@mail.ru, martakert-sag@mail.ru, shushi-sag@mail.ru, qashatax-sag@mail.ru, shahumyan-sag@mail.ru, askeran-sag@mail.ru, իրենց հաշվառման կամ բնակության վայրի՝ Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության աշխատակազմի սոցիալական ծառայության տարածքային գործակալություն են ներկայացնում գրավոր դիմում, ամուսնության վկայականի պատճենը, երեխայի ծնողների կամ միակ ծնողի անձը հաստատող փաստաթղթի պատճենը, երեխայի (երեխաների) ծննդյան վկայական(ներ)ի պատճեն(եր)ը:

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ



Ա. ԼԱԶԱՐՅԱՆ